ГЕНОЦИД АРМЯН: ОТВЕТСТВЕННОСТЬ ТУРЦИИ И ОБЯЗАТЕЛЬСТВА МИРОВОГО СООБЩЕСТВА. ДОКУМЕНТЫ И КОММЕНТАРИЙ

Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов, том 1, Москва 2002, том 2, часть 1, 2003, часть 2, 2004.

Վերջապես հանրության ուշադրության կենտրոնում գտնվող «Հայերի ցեղասպանությունը. Թուրքիայի պատասխանատվությունը և համաշխարհային հանրության պարտավորությունները» փաստաթղթերի և մեկնաբանությունների ժողովածուն, որը կազմում է ծավալուն մի եռհատորյակ, ներկայացվեց լայն ընթերցողների դատին:

Աշխատության հրատարակումը հովանավորել է Ռուսաստանի հայերի միությունը, որը սատար է կանգնել Մոսկվայում գործող իր միջազգային իրավունքի և քաղաքագիտության հայկական ինստիտուտին, որտեղ իրագործվել է այդ բացառիկ ժողովածուի կազմելը:

Եռհատորյակը կազմել է, որպես պատասխանատու՝ խմբագրել և, վերջապես, առաջաբանի և մեկնաբանությունների հեղինակն է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ Յուրի Գեորգիի Բարսեղովը:

Կոթողային այս գործը տարիների տքնաջան աշխատանքի արդյունքն է: Այն լույս աշխարհ եկավ պատմական ճիշտ ժամանակահատվածում, երբ մարդիկ ու պետական բազմաթիվ կառույցներ բարձրաձայն արտահայտվեցին հոգուտ ցեղասպանությունների դատապարտման ու ճանաչման, պատմական հիշողության պահպանման ու մոռացության դեմ պայքար ծավալելու վսեմ գաղափարների:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՈԵՖԵՐԱՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ



Աշխատության հեղինակը գրքի նախաբանի առաջին իսկ էջում դիմում է ընթերցողին հռետորական կոնկրետ մի հարցով՝ ինչի՞ մասին է այս գիրքը, ինչո՞վ է պայմանավորված նրա հանդես գալը, և անմիջապես պատասխանում իր իսկ հարցին. «Ժողովածուի թեման՝ Թուրքիայի պատասխանատվությունն է հայերի ցեղասպանության համար, որը վերաբերում է ոչ միայն արդարադատության առանցքային հարցերին, այլ նաև այդ հանցագործության հետևանքների

վերացմանը»: Ցեղասպանությունը ծանրագույն հանցագործություն է, որը մեծագույն կորուստների է հասցնում միջազգային հանրությանը, ողջ մարդկությանը:

Միանգամայն իրավացի է պրոֆեսոր Յու. Բարսեղովը, երբ նկատում է, որ հայերի ցեղասպանության փաստի և այդ հանցագործության իրագործման համար միջազգային-իրավական պատասխանատվության ընդունումը Թուրքիայի կողմից Թուրքիայի և Հայաստանի, թուրք և հայ ժողովուրդների հարաբերությունների կարգավորման հարցերի առանցքն է կազմում: Ժողովածուի ստեղծման անհրաժեշտությունը սերտորեն առնչվում է արդի այն իրավիճակի հետ, երբ կրկին անգամ նոր թափ և ուժ է հավաքում Հայոց ցեղասպանությունը որպես իրողություն ճանաչելու գործընթացը:

Փաստորեն ոչ ճշմարիտ տպավորություն է ստեղծվում այն մասին, թե իբր մինչ այժմ հայերի ցեղասպանության փաստը երբեք չի ընդունվել, և չի սահմանվել թուրքերի ու Թուրքիայի պատասխանատվությունը: Կարծեք թե՝ հաստատվում է թուրքական թեզը:

Ժողովածուի հեղինակը փաստաթղթերի ու վավերագրերի հրատարակման գլխավոր նպատակն է համարում պատասխան տալ միջազգային իրավունքի մի շարք հարցերի, որոնք ծագել են Թուրքիայի՝ պատասխանատվությունից և այդ հանցագործության հետևանքների վերացման անհրաժեշտությունից խուսափելու փորձերի հետ: Պրոֆեսոր Յու. Բարսեղովը գտնում է, որ հրատարակության անմիջական նպատակը փաստաթղթերով թուրքական պետության կողմից հայերի ցեղասպանության համար պատասխանատվության հիմնավորումն է, հանցագործություն, որի իրողությունն արդեն իսկ ընդունվել է միջազգային հանրության կողմից՝ իրագործման ժամանակ: Ոչ միայն հայերը, այլև միջազգային ողջ հանրությունը, առաջադեմ մարդիկ արդեն 1915թ. կեսերից փաստաթղթերով և դատապարտող նյութերով ապացուցեցին հայերի ցեղասպանության իրողությունը: 1915-ից առ այսօր պատմագիտությունն ընթերցողների լայն շրջաններին է ներկայացրել ցեղասպանությունն իրականացնող երկրին մեղադրող արխիվային փաստաթղթերը և նյութերը, որոնք պահվում են Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Թուրքիայի, Իտալիայի, Բուլղարիայի, ԱՄՆ-ի արխիվներում, աշխարհի համարյա բոլոր երկրների լրատվության միջոցների էջերում:

Ժողովածուի ստեղծման նպատակներից էր նաև այն կարևոր հանգամանքը, որ աշխատության հեղինակը, ի մի բերելով բազմաթիվ փաստաթղթեր, հստակորեն հաստատում է այն գաղափարը, որ թուրքական պետությունը կրում է հատուկ պարտավորություններ, որոնք բխում են ազգերի իրավունքի մասին տարբեր տարիներին ընդունված կանոնադրություններից, հատուկ պայմանագրերից և համաձայնագրերից, որոնց մասնակից էր նաև նա: Որպես առաջին, հիմնական պարտականություն, Թուրքիայի Հանրապետությունը չպետք է ձգտի կոծկել ու նենգափոխել ցեղասպանության իրողությունը, այլ համարձակություն հանդես բերի ընդունելու և հաշվի նստելու փաստերի հետ:

Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ինքնին նվազագույն հատուցում կհանդիսանա հայ ժողովրդի կրած բարոյական բազմաթիվ անհաշիվ կորուստների դիմաց: Թուրքիայի հանրապետությունը հաշվի պետք է նստի այն փաստի հետ, որ միջազգային փորձը, որը վե-

ղաքերում է կոնկրետ թուրքական պետությանը, հիմնավոր իրավական հիմք է տալիս հաստատելու, որ այս պետության ինքնությունը և անընդհատությունը չի փոխվել երկրի պատմության մեջ եղած փոփոխություններից՝ Օսմանյան կայսրության փլուզումից ի վեր: Փաստորեն Թուրքիայի ո՛չ տարածքային կորուստները, ո՛չ էլ քաղաքական համակարգի վերակազմակերպումը չեն եղել այնպիսին, որ տուժեր նրա շարունակվող ինքնությունն ազգերի իրավունքի տեսակետից: Հետևաբար չի կարելի համարել, թե թուրք կառավարությունները, որոնք հրաժարվել են պատասխանատվությունից, արդարացվել են: Միակ եզրահանգումն այն է, որ պատասխանատվություն է կրում այն պետությունը, որը ներկայումս ներկայանում է միջազգային հանրությանը, այսինքն իր նախորդների նման ներկայիս Թուրքիայի կառավարությունն էլ պարտավոր է ստանձնել այս պատասխանատվությունը, առանց փորձելու մեջտեղ բերել պետության ընդհատության պատրվակը՝ պատասխանատվությունից խուսափելու նպատակով: Այդ պատասխանատվությունը նախ և առաջ նշանակում է պարտավորված զգալ պաշտոնապես ճանաչելու կատարված ցեղասպանության իրողությունը և հայ ժողովրդի կրած կորուստները:

Միջազգային իրավունքը ցեղասպանության հանցագործության կատարման հետ է կապում նաև նյութական պատասխանատվության կրումը՝ որպես ունեցվածքի վերադարձում և սեփականության այլ իրավունքների վերականգնում (ռեստիտուցիա), ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ ամբողջ ազգային խմբին պատճառած վնասների և կորուստների փոխհատուցում (ռեպարացիա՝ տոկոսի համարժեքով և հավելումով): Նյութական պատասխանատվության սահմանումը պայմանավորված է ոչ միայն արդարության, ունեցվածքային, սեփականության, այլև այլ խախտված իրավունքների վերականգնման անհրաժեշտությամբ:

Ցեղասպանության համար նյութական պատասխանատվության իրավական իմաստն այն է, որ բռնի զրկմամբ պայմաններ են ստեղծվում ազգային խմբի քայքայման համար, ինչը և հանդիսանում է ցեղասպանության հանցակազմ, ուստի հակազդումն այդ հանցանքին ենթադրում է նախ՝ խախտված իրավունքների վերականգնում, ապա՝ համապատասխան պատժամիջոցների կիրառում հանցանքը գործողների դեմ: Բոլորը, ովքեր մասնակցել են այդ գործողություններին՝ մասնավոր անձինք, պետություն կազմող ժողովուրդը և պետությունն ինքնին, ենթակա են տնտեսական պատժամիջոցի գործողությանը:

Ժողովածուի հրատարակությունը համոզիչ մի փաստարկ է ևս մեկ անգամ ցույց տալու, որ Հայոց ցեղասպանությունը վաղուց դարձել է անարդարության և անօրինակության խորհրդանիշ: Աշխարհը չի կարող հանդուրժել նման իրավիճակ: Ժողովուրդների պատմական հիշողությունն ունի հավերժական ծալքեր, որոնց խորքերում ամուր պահպանվում են իրենց մշտապես զգացնել տվող չսպիացած վերքերը: Ենթադրել, թե 1915 թվականի ցեղասպանությունը սոսկ մի սարսափահար հիշողություն է, որը մխրճվել է ու մնացել հայ ժողովրդի պատմական հիշողության մեջ և այսօրվա հայ մարդու աշխարհընկալման վրա ոչ մի ազդեցություն չի թողել, սխալ կլիներ: Հավանաբար ժամանակի ընթացքում կվերանան ատելության և վրեժխնդրության զգացումները, բայց քանի դեռ կենդանի են բազմաթիվ հայեր, որոնք ծնվել են Արևմտյան Հայաստանում, որոնց ընտանիքների անդամները, բարեկամներն ու ազգականները զոհ են գնացել ցե-

ղասպանությանը և այսօր էլ խոր վշտով հիշում են կորցրած հայրենիքը, հարազատ ծննդավայրը, եղեռնի զոհերին, այդ հայերը և նրանց ժառանգները չեն մոռանում ժողովրդին հասցված ցավը, որը չի թուլանում և դեռ երկար մնում է:

Ցանկանում եմ մեջբերման կարգով ընթերցողին ներկայացնել պրոֆեսոր Յու. Բարսեղովի հետևյալ խոսքերը. «Պայքարը ցեղասպանության դեմ ինչ որ ֆակուլտատիվ պարտականություն, ինչ որ բարի ցանկություն չէ, այլ աշխարհի բոլոր պետությունների ուղղակի պարտքը: Դա նրանց պարտականությունն է, նրանց պարտավորությունը միջազգային իրավունքի հանդեպ:

Չպետք է ներկայանալ որպես քաղաքակիրթ, մարդկային բարոյականության ջատագով և շարունակել փակել աչքերը մարդկության պատմության մեծագույն հանցագործության առջև: Իրավունքը և բարոյականությունն ամեն մի ժողովրդից և պետությունից պահանջում են հատուկ ու պարզորոշ հարաբերությունների դրսևորում այդ հանցագործության նկատմամբ: Աշխարհն առաջին հերթին այդ ակնկալում է իրեն իսկ՝ Թուրքիայից: Կամ ժամանակակից Թուրքիան պետք է ընդունի հայերի ցեղասպանության փաստը և դատապարտի իրագործված հանցագործությունն ու նրա հետևանքները և դրանով իսկ քավի իր մեղքերը, կամ նա պետք է շարունակի հերքել այդ իրողությունը և հանդես գալ որպես միջազգային ծանրագույն հանցանքը ժառանգած և այն շարունակող սուբյեկտ: Ընտրությունը դժվար է, բայց միակ հնարավորը: Այն պահանջում է արիություն և նոր մտածողություն» (հատոր առաջին, էջ 9):

Ժողովածուի կազմման ժամանակ հեղինակը մշակել է փաստաթղթերի ընտրման հստակ սկզբունքներ: Որպես առաջնային՝ ժողովածուն կազմվել է թեմատիկ սկզբունքով:

Մեզ հայտնի են Հայոց ցեղասպանության թեմային նվիրված նաև այլ ժողովածուներ: Սակայն ընթերցողների դատին ներկայացված ներկա ժողովածուն խիստ տարբերվում է հրապարակի վրա եղած ժողովածուներից: Պրոֆ. Յու. Բարսեղովի կազմած ժողովածուն իր մեջ պարունակում է փաստաթղթեր, որոնք բովանդակում են թուրքերի և Թուրքիայի կողմից ձեռնարկած գործողությունների քաղաքական ու միջազգային-իրավական գնահատականները: Ժողովածուի մեջ տեղ են գտել հիմնականում այն փաստաթղթերը, որոնք անմիջական առնչություններ ունեն հայերի ցեղասպանության համար Թուրքիայի պատասխանատվության հետ: Հեղինակը լայնորեն ընդգրկել է Ֆրանսիայի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների արխիվներում պահվող փաստաթղթերն ու վավերագրերը և ամենայն բծախնդրությամբ ու բարձր որակավորում և հմտություն ունեցող մասնագետի ջանադրությամբ յուրաքանչյուր ընտրված վավերագիր ներկայացրել յուրովի ու անհերքելի մեղադրականով:

Ժողովածուն բաղկացած է յոթ բաժիններից:

Առաջին բաժնում ներկայացված են միջազգային իրավունքի սկզբունքները և ընդհանուր նորմերը բովանդակող փաստաթղթերը, որոնց հիման վրա սահմանվում են պետությունների և ֆիզիկական անձերի պատասխանատվությունը ցեղասպանության հանցագործության համար:

Ժողովածուի երկրորդ բաժինը ներկայացնում են Օսմանյան կայսրության պատասխանատվության ձևերին նվիրված փաստաթղթերը, ո-

բոնք վերաբերում են 1876-1914թթ. հայերի՝ որպես էթնիկական խմբի մասնակի ոչնչացմանը:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում երրորդ բաժնում տեղ գտած փաստաթղթերը, որոնք հավաստում են Թուրքիայի պատասխանատվությունը 1914-1923թթ. հայերի բնաջնջումը կազմակերպելու և իր բնօրրանում տեղաբնիկ մի ողջ էթնոսի վերացումն իրագործելու մասին:

Ժողովածուի՝ Թուրքիայի պատասխանատվությունը հաստատող երկրորդ և երրորդ բաժիններին որպես լրացում հանդես եկող չորրորդ բաժինը հիմնականում ներկայացնում է միջազգային իրավունքի և ցեղասպանության գծով առանձին փորձագետների կարծիքները, իրավաբանական մարմինների եզրակացությունները:

Ժողովածուի երկրորդ հատորը սկսվում է հինգերորդ բաժնով, որտեղ տեղ են գտել Հայկական հարցի քաղաքական պատմությանը նվիրված փաստաթղթերը: Ինչպես հինգերորդ, այնպես էլ նրան հաջորդող վեցերորդ և յոթերորդ բաժիններն առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում, որտեղ տեղ գտած փաստաթղթերի վերլուծությանն է նվիրվել ժողովածուի երրորդ հատորը: Այն հիմք է հանդիսացել առանձին մեկնաբանությունների շարադրման համար:

Ժողովածուի մասին շատ կարելի է գրել: Սակայն առավել անհրաժեշտ է անմիջական շփումն այդ երեք գրքերի հետ: Դրանք նժարի վրա դնելու կարիք չկա: Անհրաժեշտ է գիտական անեմաբարձր չափանիշներով գնահատել պրոֆ. Յու. Բարսեղովի աշխատանքը:

ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր